

Դատական Գործ N: ԿԴ2/0200/02/09

Հայցադիմումը /դիմումը/ ստացվել է:	19-06-2009
Հայցվոր/դիմող	
Անուն:	"Բջնի" հանքային ջրերի գործարան" ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ Արսեն Չիտչյան
Հասցե:	ք.Երևան, Թոթովենցի 8/2շ. բն. 21
Ներկայացուցիչ	
Անուն	Անդրանիկ
Ազգանուն	Մկրտչյան
Հասցե	ք.Երևան, Գրիբոյեդովի փ. 31շ. բն. 19
Սեռ	Արական
Պատասխանող	
Անուն:	"Բջնի Գրուպ" ՍՊԸ
Հասցե:	ք.Չարենցավան, գործարանային 8
Տիպ:	Առետրային /ԲԲԸ, ՓԲԸ, ՍՊԸ,Ա/Կ եվ այլն/
Քաղաքացիական գործի ստացման կարգը:	Առաջին անգամ
Ինքնուրույն պահանջ ներկայացնող:	
3-րդ անձ	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Պահանջ:	Առաջին գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին
Հիմնական պահանջի վիճակագրության տողի համարը:	2.1.2
Պետական տուրք:	0
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Հակընդդեմ հայցի ներկայացման ամսաթիվը:	
Հակընդդեմ պահանջ:	
Պետական տուրք:	
Ամսաթիվ:	19-06-2009
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Չարենցավան
Դատավորի անուն:	Կարեն Դերենիկի Պողոսյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Չարենցավան

Դատավորի անուն:	
Որոշման ամսաթիվ:	19-06-2009
Ներկայացվել է միջնորդություն:	Ապահովում կիրառելու
Բավ/մերժ:	Բավարարվել է
Որոշման ամսաթիվ:	19-06-2009
Տրվել է կատարողական թերթ:	19-06-2009
Հայցի ապահովման միջոցները:	Պատասխանողին որոշակի գործողություններ արգելելը
Այլ նշումներ:	
Դատաքննության ամսաթիվ:	06-07-2009
Ծանուցագիրը ուղարկվել է:	23-06-2009
Այլ նշումներ:	
Ժամ:	
Դատաքննության ամսաթիվ:	13-07-2009
Ծանուցագիրը ուղարկվել է:	06-07-2009
Այլ նշումներ:	
Ժամ:	12.00
Նիստերի դահլիճի համար:	1
Դատաքննության ամսաթիվ:	21-07-2009
Ծանուցագիրը ուղարկվել է:	13-07-2009
Այլ նշումներ:	
Ժամ:	14.00
Նիստերի դահլիճի համար:	1
Դատաքննության ամսաթիվ:	24-07-2009
Ծանուցագիրը ուղարկվել է:	14-07-2009
Այլ նշումներ:	
Ժամ:	16.00
Նիստերի դահլիճի համար:	1
Դատաքննության ամսաթիվ:	28-07-2009
Ծանուցագիրը ուղարկվել է:	24-07-2009
Այլ նշումներ:	
Ժամ:	12.00
Նիստերի դահլիճի համար:	1
Հայցի լուծման ամսաթիվ:	29-07-2009
Հայցի լուծումը:	Բավարարվել է

Հողված	
Հողված	ՀՀ քաղ. օր. 303-306
Հակընդդեմ հայցի լուծումը :	
Հակընդդեմ հայցի լուծման ամսաթիվ:	
Այլ նշումներ:	
Ղատական ակտ (վճիռ, որոշում):	<p>Թիվ ԿԴՁ/0200/02/09 Վ Ճ Ի Ռ ՀԱՆՈՒՄՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ</p> <p>29 հուլիսի 2009թ. ք. Չարենցավան</p> <p>ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ</p> <p>ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ՝ ԴԱՏԱՎՈՐ Կ. ՊՈՂՈՍՅԱՆԻ</p> <p>ՔԱՐՏՈՒԴԱՐՈՒԹՅԱՄԲ՝ Ն. ՆԱԴԴԱԼՅԱՆԻ</p> <p>ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ՝</p> <p>ՀԱՅՑՎՈՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ՝ Ա. ՄԿՐՏՉՅԱՆԻ</p> <p>ՊԱՏԱՍԽԱՆՈՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ՝ Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆԻ</p> <p>Ղռնբաց ղատական նիստում, քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի «Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերության /հասցեն՝ ք. Չարենցավան, Գործարանային 8, ՀՎՀՀ՝ 02802019, պետ. գրանցման վկայական՝ 01 Ա 021506/, սնանկության գործով կառավարիչ Արսեն Վասիլի Չիտչյան (լիցենզիա՝ 01 Ա- N00114) /հասցեն՝ ք. Երևան, Թոթովենցի 8/2շ., բն. 21, անձնագիր՝ AB 0380000, տրված՝ 21.03.1997թ., 005-ի կողմից/ ընդդեմ «Բջնի Գրուպ» ՍՊ ընկերության՝ /ք. Չարենցավան, Գործարանային 8/ առջին և գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին</p> <p>Պ Ա Ր Զ Ե Ց</p> <p>1. Գործի ղատավարական նախապատմությունը Հայցվոր «Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերության սնանկության գործով կառավարիչ Արսեն Վասիլի Չիտչյանը դիմել է ղատարան 19.06.2009թ.: Հայցը վարույթ է ընդունվել 19.06.2009թ.: Միաժամանակ ղատարան ներկայացված հայցադիմումով միջնորդել է, որպեսզի հետագայում ղատական ակտի կատարումը անհնարին չդառնա կամ չդժվարանա, հիմք ընդունելով ՀՀ քաղ. ղատ. օր.-ի 97-99 հոդվածները, որպես հայցի ապահովման միջոց արգելել «Բջնի Գրուպ» ՍՊ ընկերությանը կնքելու 8543, 8544, 9740, 10979, 13127 համարների ներքո գրանցված ապրանքային նշանների հետ կապված ցանկացած գործարք, ինչպես նաև արգելել ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալությանը կատարելու 8543, 8544, 9740, 10979, 13127 համարների ներքո գրանցված ապրանքային նշանների գրանցմանն ուղղված գործողություններ: Ղատարանի կողմից միջնորդությունը բավարարվել է և 19.06.2009թ. որոշմամբ կիրառվել է հայցի ապահովման միջոցներ, արգելվել է «Բջնի Գրուպ» ՍՊ ընկերությանը կնքելու 8543, 8544, 9740, 10979,</p>

13127 համարների ներքո գրանցված ապրանքային նշանների հետ կապված ցանկացած գործարք, ինչպես նաև արգելվել է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալությանը կատարելու 8543, 8544, 9740, 10979, 13127 համարների ներքո գրանցված ապրանքային նշանների գրանցմանն ուղղված գործողություններ:

Հայցադիմումին պատասխան է ներկայացվել 24.07.2009թ.: Գործը քննվել է համաձայն ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222 գլխի կանոնների:

2. Հայցի հիմքերը, հայցվորի փաստարկները և պահանջը

1.) Հայցվորը դիմելով դատարան հայտնել է, որ ՀՀ ԿԱ ՀՊԾ պետի 24.10.2007թ. թիվ 1031148 հանձնարարագրով «Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերությունում սկսվում է պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ստուգում:

16.01.2008թ. կազմվում է թիվ 1031148 ստուգման ակտը, որով ընկերությանն առաջադրվում է՝ 4 067 201 600 ՀՀ դրամի հարկային պարտավորություն:

01.10.2008թ. ընկերության և պատասխանողի միջև կնքվում է ապրանքային նշանների զիջման մասին պայմանագիր, որով ընկերությունը 750000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ) գումարով պատասխանողին է զիջել 8543, 8544, 9740, 10979, 13127 համարների ներքո գրանցված ապրանքային նշանները:

2.) Հայցվոր կողմը նշել է, որ իրենց կարծիքով Ընկերության և պատասխանողի միջև 01.10.2008թ. կնքված ապրանքային նշանների զիջման մասին պայմանագիրը շինծու է հետևյալ պատճառաբանությամբ.

Պայմանագրով ընկերությունը ապրանքային նշանները զիջել է ընդամենը 750000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ) գումարով: Մինչդեռ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲ ընկերության կողմից կազմված մասնագիտական գնահատման հաշվետվությամբ (կցված է հայցադիմումին) հաստատված է, որ դրանց իրական շուկայական արժեքն իրականում հարյուրավոր անգամ ավել է այն գումարից, որի դիմաց Ընկերությունը պատասխանողին է զիջել ապրանքային նշանները: Անհասկանալի է, թե Ընկերությունը, լինելով առևտրային կազմակերպություն և հետապնդելով շահույթ ստանալու նպատակ, ինչպես է կնքել նման գործարք, որը ոչ մի կերպ չի տեղավորվում շահույթ ստանալու նպատակ հետապնդող գործարքի որակման շրջանակներում: Ասվածին պետք է ավելացնել նաև այն հանգամանքը, որ այդ ապրանքային նշանները եղել են Ընկերության ամենախոշոր ակտիվներից՝ առանց որոնց Ընկերության հետագա առևտրային գործունեությունը թվում է անհեռանկար և աննպատակահարմար: Ընկերության կողմից նման գործարքի կնքումը կարող է ունենալ միայն մեկ բացատրություն.

Ընկերությունը, տեղյակ լինելով իր 4 067 201 600 ՀՀ դրամ պարտավորության մասին և կանխատեսելով վերահաս սնանկությունը, Պայմանագրով փորձել է «ծերբագատվել» իր խոշոր ակտիվներից՝ ապրանքային նշանները փոխանցելով մեկ այլ՝ փոխկապակցված (Ընկերությունն ու պատասխանողն ունեն համընկնող բաժնետերեր (մասնակիցներ)) ընկերության՝ պատասխանողին: Սակայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 598-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված առևտրային

կազմակերպությունների միջև հարաբերություններում նվիրատվության արգելքը շրջանցելու համար Ընկերությունը և պատասխանողը կնքել են ոչ թե նվիրատվության պայմանագիր, այլ ապրանքային նշանների հատուցմամբ զիջման մասին պայմանագիր՝ դրանով իսկ քողարկելով իրենց միջև կնքված նվիրատվության պայմանագիրը: Այսինքն, ապրանքային նշանների զիջման մասին պայմանագիրը ստորագրած անձանց կամքը չի համապատասխանել Պայմանագրում շարադրվածին և նպատակ է հետապնդել քողարկելու ապրանքային նշանների անհատույց

փոխանցման պայմանագրի առկայությունը: Փաստորեն, ըստ հայցվորի առկա է շինծու գործարք, քանի որ կողմերի միջև իրականում ծագել են այլ իրավահարաբերություններ, այն է՝ մեծ արժողությամբ ապրանքային նշանների անհատույց փոխանցման իրավահարաբերություն, որն իր բնույթով և իրավական հատկանքներով այլ է, քան այն իրավահարաբերությունը, այսինքն՝ մեծ արժողության ապրանքային նշանների աննշանակալից գնով վաճառքը, որոնք կողմերը ցանկացել են ներկայացնել երրորդ անձանց:

Հայցվորը նշել է, որ ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներում, մեկնաբանելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306 հոդվածի 2-րդ մասը, նշել է, որ գրավոր գործարքների նկատմամբ շինծու լինելու հիմքով առջինն գործարքի անվավերության հետևանքների կիրառման համար անհրաժեշտ է ապացուցել, որ՝

1. գործարքն իրականում կնքվել է ոչ այն ստորագրած անձանց միջև, կամ

2. այն ստորագրած անձանց կամքը չի համապատասխանում պայմանագրում շարադրվածին: Այսինքն, շինծու գործարքն առկա է այն դեպքում, երբ կողմերի միջև իրականում ծագում են իրավահարաբերություններ, սակայն դրանք իրենց բնույթով այլ են, քան այն իրավահարաբերությունները, որոնք կողմերը ցանկանում են ներկայացնել երրորդ անձանց:

ՀՀ վճռաբեկ դատարանը 01.02.2008թ. թիվ 3-89 (ՏԴ) գործով կայացված որոշմամբ անիրատեսական է համարել շահույթ ստանալու նպատակ հետապնդող ընկերության կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքն անհատույց օգտագործման տրամադրելը, և փաստել այդ պայմանագրով մեկ այլ պայմանագրի քողարկման հանգամանքը:

Հայցվորի պնդմամբ իրենց կողմից Պայմանագրի առաջնության վերաբերյալ վերը բերված հիմնավորումները լիովին տեղավորվում են ՀՀ վճռաբեկ դատարանի վերոհիշյալ իրավական դիրքորոշման շրջանակներում և ևս մեկ անգամ փաստում Պայմանագրի՝ շինծու լինելու հանգամանքը:

Ելնելով վերոգրյալից դատարանին հավաստեց՝ Պայմանագրի նկատմամբ պետք է կիրառվեն նվիրատվության պայմանագրին վերաբերող կանոնները, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 598 հոդվածի 3-րդ մասն արգելում է առևտրային կազմակերպությունների միջև հարաբերություններում նվիրատվությունը: Դրանից հետևում է, որ իրականում Ընկերության և պատասխանողի միջև կնքված նվիրատվության պայմանագիրը չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304 և 305 հոդվածի պահանջներին:

3.) Հաշվի առնելով վերոգրյալը դատարանին խնդրում են՝

1. «Բջնի Գրուպ» ՍՊ ընկերության և «Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերության միջև 01.10.2008թ. կնքված ապրանքային նշանների զիջման մասին պայմանագրի նկատմամբ կիրառել առջինն գործարքի անվավերության հետևանքներ, այն է՝ նշված պայմանագրի նկատմամբ կիրառել նվիրատվության պայմանագրին վերաբերող կանոնները:

2. Անվավեր ճանաչել «Բջնի Գրուպ» ՍՊ ընկերության և «Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերության միջև 01.10.2008թ. կնքված ապրանքային նշանների զիջման մասին պայմանագիրը՝ որպես օրենքի պահանջներին չհամապատասխանող գործարք:

3. կիրառել անվավերության հետևանքներ, դրանք են՝

• «Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերության և «Բջնի Գրուպ» ՍՊ ընկերության միջև 01.10.2008թ. կնքված ապրանքային նշանների զիջման մասին պայմանագրով վերջինիս փոխանցված և 8543, 8544, 9740, 10979, 13127 համարների ներքո գրանցված ապրանքային նշանները սեփականության իրավունքով հետ փոխանցել «Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերությանը՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության

գործակալության կողմից կատարելով համապատասխան գրանցումներ,

• «Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերության և «Բջնի Գրուպ» ՍՊ ընկերության միջև 01.10.2008թ. կնքված ապրանքային նշանների զիջման մասին պայմանագրով «Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերության կողմից ստացված 750000 ՀՀ դրամը վերադարձնել «Բջնի Գրուպ» ՍՊ ընկերությանը:

4.) Գործի դատաքնությանը նախապատրաստական փուլում հայցվորի ներկայացուցիչ հրաժարվեց հայցադիմումում նշված 3-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներից այն է՝

• ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության կողմից կատարելով համապատասխան գրանցումներ,

3. Պատասխանողի իրավական դիրքորոշումը

Պատասխանող «Բջնի Գրուպ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Ա. Խաչատրյանի կողմից 24.07.2009թ.-ին դատարան է ներկայացվել հայցադիմումի պատասխան, որով հայտնել է, որ հայցադիմումի «գործի նախապատմությունը և փաստերը» բաժնի 1-ին և 2-րդ կետերում նշված «Բջնի հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերության հետ կապված փաստերը, որևէ էական նշանակություն չունեն վեճի համար և վերաբերելի չեն «Բջնի Գրուպ» ՍՊ ընկերությանը:

Նշվել է նաև, որ իրենք չեն ընդունում, որ իրենց և «Բջնի հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերության միջև 01.10.2008թ. կնքված ապրանքային նշանների զիջման մասին պայմանագիրը շինծու է, այսինքն, կնքվել է մեկ այլ գործարքի քողարկման նպատակով: Պատասխանողը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48 հոդվածի 1-ին մասը, հայտնել է, որ նշված հոդվածի բովանդակության համաձայն՝ եթե դատավարության որևէ կողմ վկայակոչում է ինչ-որ փաստ, ապա նա էլ պարտավոր է այդ փաստն ապացուցել, ինչը նշանակում է, որ դատավարության կողմերը պարտավոր են ի հիմնավորումն իրենց վկայակոչած փաստի ներկայացնել թույլատրելի և վերաբերելի ապացույցներ:

Պատասխանողը հայտնել է, որ հայցվորը վկայակոչել է իրենց և «Բջնի հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերության միջև 01.10.2008թ. կնքված պայմանագիրը շինծու (մեկ այլ գործարքի քողարկման նպատակով կնքված) լինելու փաստը, ուստի և պետք է կրի դրա ապացուցման բեռը:

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51 հոդվածի 1-ին մասը պատասխանողը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում որևէ փաստի ապացուցման կապակցությամբ որևէ ապացույցի թույլատրելիությունը գնահատելիս պետք է հաշվի առնել վկայակոչվող իրավահարաբերությունը կարգավորող նյութական իրավունքի նորմերը, մասնավորապես, պարզել, թե կոնկրետ փաստի առկայությունը հաստատելու համար ինչպիսի թույլատրելի ապացույցներ են պահանջում նյութական իրավունքի նորմերը:

Ի հաստատում նշված փաստի՝ հայցվորն ընդամենը վկայակոչել է մի փաստարկ (ոչ ապացույց), որով վերջինս փորձել է հիմնավորել պայմանագրի շինծու լինելը՝ մեջբերելով հայցադիմումի հետևյալ մասը, համաձայն որի հայցվոր կողմը նշել է, որ պայմանագրով ընկերությունն ապրանքային նշանները զիջել է 750.000 ՀՀ դրամով (ներառյալ ԱԱՀ) գումարով, մինչդեռ «Բեյթեր Թիլլի Արմենիա» ՓԲ ընկերության կողմից կազմված մասնագիտական գնահատման հաշվետվությամբ հաստատված է, որ դրանց իրական շուկայական արժեքն իրականում հարյուրավոր անգամ ավել է այն գումարից, որի դիմաց ընկերությունը պատասխանողին է զիջել ապրանքային նշանները: Անհասկանալի է, թե «Բջնի հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերությունը, լինելով առևտրային կազմակերպություն և հետապնդելով շահույթ ստանալու նպատակ, ինչպես է կնքել նման

գործարք, որը ոչ մի կերպ չի տեղավորվում շահույթ ստանալու նպատակ հետապնդող գործարքի որակման շրջանակներում: Պատասխանողը նշել է, որ որպես քողարկված գործարք հայցվորը վկայակոչել է «նվիրատվության պայմանագիրը», սակայն նշված փաստաթղթերի վերլուծության արդյունքում պատասխանող կողմը եկել է այն եզրահանգամանը, որ հայցվորին շփոթության մեջ է գցել պայմանագրի գինը:

Պատասխանող կողմը վկայակոչել է այն հանգամանքը, որ պատասխանողի և «Բջնի հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերության միջև 01.10.2008թ. կնքված պայմանագրի հիման վրա ծագած հարաբերությունների պայմանագրային հարաբերություններ են, իսկ դա նշանակում է, որ կողմերն ազատ են որոշելու իրենց հարաբերության բովանդակության մեջ ներառված պայմանները (այդ թվում՝ գնի վերաբերյալ պայմանը):

Պատասխանող կողմը նշել է նաև, որ նշված եզրահանգաման համար իրավական հիմք են հանդիսանում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3, 437 և 440 հոդվածներով ամրագրված համապատասխան նորմերը և շարադրելով դրանց պահանջները՝ հայտնել է, որ պայմանագրի կատարումը վճարվում է կողմերի համաձայնությամբ սահմանված գնով և նշված իրավանորմերը հնարավորություն են տալիս քաղաքացիաիրավական հարաբերությունների սուբյեկտներին իրենց ազատ կամահայտնության արդյունքում սահմանել պայմանագրի գին, ինչը և տվյալ պարագայում արել են պատասխանողը և «Բջնի հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերությունը 01.10.2008թ. կնքված պայմանագրով: Նման իրադրությունում պայմանագրի ազատության նորմ-սկզբունքի իրացումը դիտարկել որպես գործարքի շինծու հանգամանքը հավաստող փաստ առարկայագուրկ է:

Պատասխանողը հայտնել է նաև, որ եթե հայցվոր կողմը չկարողանա դատարանին ցույց տալ քողարկված գործարքը, ապա միայն այդ հիմքը բավարար է հայցը մերժելու համար՝ վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306 հոդվածը և նշելով, որ ՀՀ վճռաբեկ դատարանը օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու իր սահմանադրական առաքելությունն իրականացնելու ժամանակ արձանագրել է, որ վերոնշյալ հոդվածից հետևում է, որ գրավոր գործարքների նկատմամբ շինծու լինելու հիմքով առջինն գործարքի անվավերության հետևանքների կիրառման համար անհրաժեշտ է ապացուցել, որ գործարքն իրականում կնքվել է ոչ այն ստորագրած անձանց միջև կամ այն ստորագրած անձանց կամքը չի համապատասխանում պայմանագրում շարադրվածին: Այսինքն, շինծու գործարքն առկա է այն դեպքում, երբ կողմերի միջև իրականում ծագում է իրավահարաբերություններ, սակայն դրանք իրենց բնույթով այլ են, քան այն իրավահարաբերությունները, որոնք կողմերը ցանկանում են ներկայացնել երրորդ անձանց՝ ավելացնելով, որ նման մեկնաբանությամբ ակնհայտ է, որ դատարանի կողմից գործարքը շինծու որակելու համար անհրաժեշտ է ցույց տալ քողարկված (թաքնված) գործարքը, հակառակ դեպքում չի կարելի խոսել գործարքի շինծու լինելու մասին:

Պատասխանողը հայտնել է նաև, որ հայցվորի կարծիքով քողարկվել է նվիրատվության գործարք՝ վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 594 հոդվածի 1-ին մասով սահմանված նվիրատվության պայմանագրին վերաբերող պահանջները, սակայն նշված հոդվածից հետևում է, որ պայմանագիրը որևէ կերպ չէր կարող նվիրատվության պայմանագիր որակվել, որովհետև այն հատուցմամբ է, իսկ այդ փաստն արդեն իսկ բացառում է վկայակոչած «քողարկված» գործարքի հնարավոր գոյությունը և այդ պայմաններում դատարանը չի կարող արձանագրել շինծու գործարքի առկայություն:

Պատասխանողը հայտնել է նաև, որ չնայած այն հանգամանքին, որ վճռաբեկ դատարանի որոշմամբ կարևորված երկու հանգամանքների առկայության ապացուցման բեռը կրում է հայցվորը, այնուամենայնիվ, իրենք ցանկանում են իրենց

դիրքորոշումը հայտնել նշված հանգամանքների վերաբերյալ՝ ընդգծելով, որ պայմանագիրն իրականում կնքվել է այն ստորագրած անձանց միջև: Մասնավորապես պատասխանողի անունից հանդես է եկել ընկերության տնօրեն Սայաթ Հովհաննիսյանը, իսկ «Բջնի հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերության անունից՝ տնօրենների խորհրդի նախագահ Գևորգ Կիրակոսյանը:

Վերջիններս գործել են կանոնադրության հիման վրա: Բացի այդ, պատասխանողը նշել է, որ պայմանագիրը ստորագրած անձանց կամքը պայմանագրում շարադրվածին համապատասխանելու հանգամանքը հաստատվում է նրանով, որ պատասխանողն ի կատարումն 01.10.2008թ. կնքված պայմանագրից բխող իր՝ վճարման պարտականության համապատասխան հանձնարարագրով կատարել է պայմանագրի գնի վճարումը, իսկ պատասխանողը, ի կատարումն պայմանագրով սահմանված իր պարտականության, հանձնել է պայմանագրի առարկան կազմող թիվ 8543, 8544, 9740, 10979, 13127 համարների ներքո գրանցված ապրանքային նշանները: Նշված հանգամանքը հաստատվում է նրանով, որ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալությունը համապատասխան գրանցման համարով գրանցել է պայմանագիրը:

Պատասխանողը հայտնել է նաև, որ իրենց համար ընդհանրապես հասկանալի չէ հայցվոր կողմի ինքնահակասական պահանջները, քանի որ մի դեպքում հայցվորը խնդրել է կիրառել առռչինչ անվավերության հետևանքներ, այն է՝ նշված պայմանագրի նկատմամբ կիրառել նվիրատվության պայմանագրին վերաբերող կանոնները, իսկ մյուս դեպքում՝ խնդրել է անվավեր ճանաչել իր իսկ կողմից «առռչինչ» համարվող պայմանագիրը:

Բացի այդ, անվավերության հետևանքների կիրառման մասով պահանջ է ներկայացվել ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալությանը գրանցում կատարելը պարտավորեցնելու մասով, սակայն վերջինս չի ներգրավվել դատավարությանը:

Պատասխանողին չի տրամադրվել հայցադիմումին կից փաստաթղթերը և ավելին՝ չի տեղեկացվել, որ դրանք դատարանում դեպոնացված են և պատասխանողը կարող է ծանոթանալ:

Պատարանի կողմից ուղարկված դատական ծանուցագրի բովանդակությունից հասկանալի, չէ արդյոք Պատասխանողը 21.07.2009թ. ժ.14.00-ին հրավիրվում է դատարան նախնական դատական նիստի, թե դատաքննության:

Նշվել է նաև, որ դատարանը, ի խախտումն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95 հոդվածի պահանջի, նախնական դատական նիստ է նշանակել հայցադիմումը պատասխանողի կողմից ստանալու 3-րդ օրը, մասնավորապես հայցադիմումը պատասխանողի կողմից ստացվել է վերը նշված միջնորդությունը բավարարելուց հետո 21.07.2009թ.: Նման պարագայում պատասխանողը գտնում է, որ խախտվել է ՀՀ Սահմանադրության 18-19-րդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված արդար դատաքննության իրավունքը:

Բացի այդ, պատասխանողը նշել է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի 17.112006թ. թիվ 3-1894 (ՏԴ) որոշմամբ վճռաբեկ դատարանն արտահայտել է իր իրավական դիրքորոշումը, մասնավորապես արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95 հոդվածի 1-ին մասը նաև պատասխանողի իրավունքն է սահմանված 14-օրյա ժամկետում ներկայացնելու գրավոր պատասխան:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95 հոդվածի դրույթներով՝ պատասխանողը խնդրել է «Բջնի հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերության սնանկության գործով կառավարիչ Արսեն Զիտյանի հայցը մերժել:

4. Ղատարանի իրավական վերլուծությունը, պատճառաբանությունները և եզրահանգումը

Ղատարանը լսելով հայցվորի ներկայացուցչին, պատասխանողի ներկայացուցչին, հետազոտելով հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը և յուրաքանչյուր ապացույց գնահատելով, գործում եղած ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության, հանգում է այն հետևության, որ վերոհիշյալ ապացույցներով, հայցապահանջը հիմնավորված է և ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54 հոդվածի 1-ին մասի «Կառավարիչը կարող է սնանկության վերաբերյալ դիմում ներկայացնելուց հետո ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում դիմել դատական կարգով հետ ստանալու»^ա

բ) պարտապանի կատարած անհատույց փոխանցումները ցանկացած երրորդ անձանց, որոնք կատարվել են սնանկության վերաբերյալ դիմում ներկայացնելուն նախորդող երեք տարվա ընթացքում.

դ) պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող երեք տարվա ընթացքում կատարված գործարքների, փոխանցումների և գույքի օտարումների հետևանքով պարտապանին պատճառված վնասը, որը հետևանք է գույքի, ծառայության, աշխատանքի իրացման արժեքի և գործարքի կատարման պահի դրությամբ դրա շուկայական արժեքի տարբերության, բացառությամբ եթե գործարքը կնքվել է հրապարակային սակարկության հիման վրա»:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 29 հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ սնանկության վերաբերյալ գործով նշանակված կառավարիչը՝ սնանկության գործով դիմում է դատարան՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում, իսկ նույն հոդվածի, նույն մասի գ» կետի համաձայն՝ սնանկության վերաբերյալ գործով նշանակված կառավարիչը պարտապանի անունից դիմում է դատարաններ՝ դատական կարգով լուծում պահանջող հարցերով, ներգրավվում է պարտապանի այն դատավարություններում, որոնցում վերջինս հանդես է եկել որպես հայցվոր կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձ, առանց լիազորագրի հանդես է գալիս պարտապանի անունից:

Սիւստանանակ վերոհիշյալ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքով լիազորություններ իրականացնելիս կառավարիչը գործում է պարտապանի անունից և իր պատասխանատվությամբ:

Տվյալ դեպքում, ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 06.05.2009թ. վճռի համաձայն՝ «Բջնի հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերությունը ճանաչվել է սնանկ, իսկ 17.06.2009թ. որոշմամբ Արսեն Զիտյանը նշանակվել է «Բջնի հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերության սնանկության գործով կառավարիչ, այսինքն, վերջինս, որոշման համաձայն ունենալով սնանկության գործով կառավարչի պատշաճ լիազորություններ, օգտվել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 29 հոդվածով սահմանված իր լիազորություններից և պարտապանի՝ «Բջնի հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերության անունից դիմել է դատարան՝ դատական կարգով լուծում պահանջող հարցով՝ «Բջնի հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերության և «Բջնի Գրուպ» ՍՊ ընկերության միջև 01.10.2008թ. կնքված առջին գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու համար և օգտվելով հայցվորի՝ ներկայացուցիչ ունենալու իր դատավարական իրավունքից, կառավարիչ Ա. Զիտյանը լիազորել է Ա. Մկրտչյանին՝ դատարանում իր օրենքով սահմանված լիազորություններն իրականացնելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության,

պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա, իսկ նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման: Քաղաքացիական իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի ու բարի համբավի պաշտպանության համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289 հոդվածը սահմանում է, որ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն, նույն օրենսգրքի 436 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիր է համարվում երկու կամ մի քանի անձանց համաձայնությունը, որն ուղղված է քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դադարելուն, իսկ նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ պայմանագրերի նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 18 գլխում նախատեսված երկկողմ և բազմակողմ գործարքների մասին կանոնները:

Տվյալ դեպքում, գործով առկա 01.10.2008թ. ապրանքային նշանների զիջման պայմանագրով «Բջնի հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերության և «Բջնի Գրուպ» ՍՊ ընկերության միջև կնքվել է երկկողմ պայմանագիր, որն ուղղված է եղել «Բջնի հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերության իրավունքները զիջվող նշանների նկատմամբ դադարելուն և միաժամանակ «Բջնի Գրուպ» ՍՊ ընկերության կողմից նշված ապրանքային նշանների նկատմամբ իրավունքների սահմանմանը:

Փաստորեն, կողմերը, օգտվելով իրենց քաղաքացիական իրավունքներից, պայմանագրի ազատության սկզբունքից ելնելով, կնքել են վերոհիշյալ պայմանագիրը և նման պայմաններում դատարանն անհրաժեշտ է համարում պարզել, թե իրականում արդյոք կողմերի նշված քաղաքացիական իրավունքները չեն հակասել օրենքին, որի ուժով և վերջիններիս պայմանագիր կնքելու ազատությունը և իրավունքը կարող են ստանալ որոշակի սահմանափակում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործարքն անվավեր է՝ սույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առջինն գործարք), իսկ նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ առջինն գործարքի անվավերության հետևանքների կիրառման մասին պահանջ կարող է ներկայացնել ցանկացած շահագրգիռ անձ: Դատարանն իրավունք ունի այդպիսի հետևանքներ կիրառել սեփական նախաձեռնությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառությամբ այն հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ: Նման գործարքն անվավեր է կնքելու պահից և նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործարքի անվավերության դեպքում կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը, իսկ ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում

(ներառյալ, երբ ստացածն արտահայտվում է գույքից օգտվելու, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության մեջ)՝ հատուցել դրա արժեքը դրամով, եթե գործարքի անվավերության այլ հետևանքներ նախատեսված չեն օրենքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305 հոդվածի համաձայն՝ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306 հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ շինծու գործարքը, այսինքն՝ մեկ այլ գործարքի քողարկման նպատակով կնքված գործարքը, առոչինչ է: Այդ գործարքի նկատմամբ, հաշվի առնելով դրա էությունը, կիրառվում են այն գործարքին վերաբերող կանոնները, որը կողմերն իրականում նկատի են ունեցել շինծու գործարքը կնքելիս:

Վերոհիշյալ հոդվածի վերաբերյալ իր կոնկրետ դիրքորոշումն ու մեկնաբանությունն է տվել հայտնել ՀՀ վճարբեկ դատարանը (01.02.2008թ. թիվ 3-89 «ՏՂ»), որը նշել է, որ գրավոր գործարքների նկատմամբ շինծու լինելու հիմքով առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման համար անհրաժեշտ է ապացուցել, որ:

Գործարքն իրականում կնքվել է ոչ այն ստորագրած անձանց միջև, կամ այն ստորագրած անձանց կամքը չի համապատասխանում պայմանագրում շարադրվածին: Այսինքն, շինծու գործարքն առկա է այն դեպքում, երբ կողմերի միջև իրականում ծագում են իրավահարաբերություններ, սակայն դրանք իրենց բնույթով այլ են, քան այն իրավահարաբերությունները, որոնք կողմերը ցանկանում են ներկայացնելու երրորդ անձանց:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք ազատ են պայմանագիր կնքելիս, իսկ նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ պայմանագրի պայմանները որոշվում են կողմերի հայեցողությամբ, բացի այն դեպքերից, երբ համապատասխան պայմանի բովանդակությունը սահմանված է օրենքով կամ այլ իրավական ակտերով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 439 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիրը, որով կողմն իր պարտականությունների կատարման համար պետք է վճար կամ այլ հանդիպական կատարում ստանա, հատուցելի է, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անհատույց է ճանաչվում այն պայմանագիրը, որով մի կողմը պարտավորվում է որևէ բան տրամադրել մյուս կողմին՝ առանց նրանից վճար կամ այլ հանդիպական կատարում ստանալու:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 440 հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ պայմանագրի կատարումը վճարվում է կողմերի համաձայնությամբ սահմանված գնով:

Տվյալ դեպքում, «Բեյքեր Թիլի Արմենիա» ՓԲ ընկերության կողմից կազմված մասնագիտական գնահատման հաշվետվությամբ հաստատվել է, որ «Բջնի հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերությունից ամենաթանկ արժեքը կազմել են դրա ոչ նյութական ակտիվները, հատկապես «Բջնի» և «Նոյ» ապրանքային նշանները, որոնցից ստացվող եկամուտների գեղչված գումարը, այլ կերպ ասված՝ ապրանքային նշանների արժեքը կազմել է 2.748.277.180 ՀՀ դրամ:

Ղատաքնությանը հաստատվել է, որ 16.01.2008թ. կազմվել է թիվ 1031148 ստուգման ակտը, որով ընկերությանն առաջադրվել է 4.067.201.600 ՀՀ դրամի հարկային պարտավորություն և նման պայմաններում «Բջնի հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերության տնօրինությունը, քաջ գիտակցելով ընկերության վերահաս սնանկությունը և դրա հետևանքները, առերևույթ ցածր գնով կնքել է ընկերության ամենաարժեքավոր ակտիվների վերաբերյալ ապրանքային նշանների գիջման պայմանագիր, որի արդյունքում նշված ապրանքային նշանները ձեռք է բերել այլ

ընկերություն:

Ինչ վերաբերում է պայմանագրի գնի սահմանման կողմերի ազատության քաղաքացիական սկզբունքին, ապա այս առումով հարկ է նշել, որ դատարանը ոչ թե ուղղակի փաստում է նշված առերևույթ ցածր գնի հիմքով պայմանագրի շինծու լինելու հանգամանքը, այլ նշված առերևույթ (իրական արժեքից հարյուրավոր անգամ ցածր) ցածր գնի միջոցով դատարանը փորձում է պարզել կողմերի իրական կամքը՝ հաշվի առնելով պայմանագրի նպատակը, իսկ դատաքննությամբ ապացուցվել է, որ նշված ցածր գինը պայմանավորված է եղել կողմի՝ «Բջնի հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերության սնանկությունից հետո մեկ այլ՝ «Բջնի Գրուպ» ՍՊ ընկերության ձեռքբերման միջոցով նշված արժեքավոր ակտիվների պահպանման անհրաժեշտությամբ և դրանք սնանկության հետևանքով հարկային պարտավորությունների ապահովմանն ուղղված միջոցներ չդառնալու նպատակով, ինչի արդյունքում կողմերը կնքել են շինծու պայմանագիր՝ ապրանքային նշանների զիջման մասին, սակայն դատաքննությամբ հաստատվել է, որ իրականում վերջիններիս պայմանագրում արտահայտված նպատակն ու կամքն ուղղված չի եղել հատուցելի պայմանագիր կնքելուն (այն չի հետապնդել առևտրային կազմակերպություններին բնորոշ շահույթ ստանալու նպատակ) և իրականում նշված պայմանագրի էությունից հետևում է, որ այն կնքվել է մեկ այլ անհատույց գործարքի քողարկման նպատակով, որպիսին է նվիրատվության պայմանագիրը, որը կողմերը ապրանքային նշանների զիջման դեպքում բնականաբար չէին կարող կնքել, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 598 հոդվածի 3-րդ կետը հստակ սահմանում է, որ արգելվում է առևտրային կազմակերպությունների միջև նվիրատվությունը: Այսինքն, դատարանը ոչ թե կողմերի միջև 01.10.2008թ. պայմանագիրը որակել է որպես նվիրատվության պայմանագիր, քանի որ նշված պայմանագիրը եղել է հատուցմամբ պայմանագիր, այլ փաստում է հատուցմամբ պայմանագրի կնքմամբ անհատույց պայմանագրի քողարկման առկայությունը, որպիսին է նվիրատվության պայմանագիրը:

Փաստորեն, հայցվոր կողմն ապացուցել և դատաքննությամբ հաստատվել է, որ պայմանագիրը ստորագրած անձանց կամքը չի համապատասխանել պայմանագրում շարադրվածին, մասնավորապես՝ «Բջնի հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերության կողմից իր արժեքավոր ակտիվների զիջումը առերևույթ ցածր գնով պայմանավորված չի եղել տվյալ ընկերության՝ որպես առևտրային կազմակերպության շահույթ ստանալու նպատակով և ընկերությունը նման պայմանագիր է կնքել՝ հստակ գիտակցելով վերահաս սնանկությունը և այդ իսկ պատճառով նշված վիճահարույց պայմանագրի կնքումը՝ սնանկության հետևանքներից խուսափելու նպատակ է հետապնդել, ինչի արդյունքում փաստորեն կնքվել է ապրանքային նշանների գումարի դիմաց զիջման պայմանագիր, որը ընդգրկված չէ ընկերության իրական նպատակով, այսինքն, նման պարագայում առկա է շինծու գործարք, երբ կողմերի միջև իրականում ծագել են իրավահարաբերություններ, սակայն դրանք իրենց բնույթով այլ են, քան այն իրավահարաբերությունները, որոնք կողմերը ցանկացել են ներկայացնելու երրորդ անձանց:

Այսինքն, վիճահարույց պայմանագրով «Բջնի հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերությունը «Բջնի Գրուպ» ՍՊ ընկերությանն է փոխանցել ապրանքային նշանները՝ նպատակ ունենալով խուսափել սնանկության հետևանքներից և շարունակել նշված ակտիվների օգտագործմամբ շահույթ ստանալ մեկ այլ՝ «Բջնի Գրուպ» ՍՊ ընկերության միջոցով:

Բացի այդ, պայմանագրի պատշաճ կատարումը, ինչպես նաև դրա պետական գրանցումը չի հաստատում այն հանգամանքը, որ պայմանագիրը ստորագրած անձանց կամքը համապատասխանել է պայմանագրում շարադրվածին, քանի որ այլ նպատակով այլ պայմանագիր կնքելը և արդեն իսկ կնքված պայմանագրի

կատարումն ապահովելը իրենց էությանը տարբեր հասկացություններ են, որոնք չեն հաստատում պայմանագրի կողմերի իրական կամքը և կողմերի կամքը պայմանագրում շարադրվածին համապատասխանելը կամ չհամապատասխանելը: Հարկ է նշել նաև, որ քաղաքացիական իրավունքների ազատությունն իրականում ենթակա է պաշտպանության և կիրառման, սակայն այն կարող է սահմանափակվել օրենքով, եթե քաղաքացիական իրավունքի իրականացման ազատությունը դրան հակասում է և չի կարող օգտագործվել քաղաքացիական իրավահարաբերություններում մասնակցող անձանց կողմից: Նշված վերլուծությունից հետևում է, որ տվյալ պարագայում, օրենքը սահմանում է պայմանագրի կնքման կողմերի ազատությունը, սակայն միաժամանակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306 հոդվածով ամրագրում է այդ ազատությանն ուղղված սահմանափակումներ՝ նշելով, որ գործարքը չի կարող կնքվել մեկ այլ գործարքի քողարկմամբ, այսինքն, պայմանագրի կողմերի ազատության սկզբունքը չի կարող պայմանավորվել և օգտագործվել՝ շինծու գործարք կնքելու նպատակով, ուստի և կողմերը նման (շինծու) պայմանագիր կնքելուց գրկված են իրենց կամքի ազատ արտահայտման իրավունքից, սակայն տվյալ գործով պայմանագրի կողմերի ազատության սկզբունքի չարաշահման արդյունքում կնքվել է մի պայմանագիր, որը կնքվել է այլ պայմանագրի քողարկման նպատակով:

Փաստորեն, վերոնշվածների համաձայն հաստատվել է, որ 01.10.2008թ. ապրանքային նշանների զիջման պայմանագիրը շինծու է եղել, ուստի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306 հոդվածի համաձայն դրա նկատմամբ, հաշվի առնելով դրա էությունը, պետք է կիրառվեն այն գործարքին վերաբերող կանոնները, որը կողմերն իրականում նկատի են ունեցել շինծու գործարքը կնքելիս և դատաքննության ընթացքում հաստատվել է, որ որպես այդպիսի գործարք կողմերը նկատի են ունեցել նվիրատվության պայմանագիրը, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 598 հոդվածի 3-րդ մասի ուժով սահմանված առևտրային կազմակերպությունների միջև հարաբերություններում նվիրատվությունն արգելվում է, այսինքն, կողմերի միջև կնքված նշված պայմանագիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306 հոդվածի 1-ին մասի ուժով, առջինն է, իսկ քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առջինն գործարքի անվավերության հետևանքների կիրառման մասին պահանջ կարող է ներկայացնել ցանկացած շահագրգիռ անձ, որպիսին տվյալ դեպքում հանդիսանում է «Բջնի հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերության սնանկության գործով կառավարիչ Ա. Չիտչյանը, որը և ներկայացրել է գործարքի անվավերության հետևանքների կիրառման պահանջ, իսկ դատաքննությամբ հաստատվել և ապացուցվել է վիճահարույց պայմանագրի շինծու լինելու հանգամանքը, ուստի դատարանը գտնում է, որ «Բջնի հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերությունը պարտավոր է «Բջնի Գրուպ» ՍՊ ընկերությանը վերադարձնել պայմանագրով ամբողջ ստացածը՝ 750.000 ՀՀ դրամը:

Ինչ վերաբերում է հայցվորի՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից համապատասխան գրանցումներ կատարելու պահանջին, ապա դատաքննության ընթացքում հայցվորի ներկայացուցիչ Ա. Մկրտչյանը հայտնել է, որ իրենք հրաժարվում են հայցի այդ մասից, և խնդրել է այդ մասով գործի վարույթը կարճել:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե հայցվորը հրաժարվում է հայցից:

Տվյալ դեպքում, հայցվորը դատաքննության ընթացքում հրաժարվել է հայցի վերը նշված պահանջից, ուստի դատարանը գտնում է, որ այդ մասով գործի վարույթը ենթակա է կարճման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101 հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն հայցը բավարարելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի կատարումը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73 հոդվածի 1-ին մասի համաձայն, դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների համամասնորեն:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 29 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված իր լիազորությունների շրջանակներում դատարաններ ներկայացվող հայցադիմումների, դիմումների, վերաքննիչ և վճառել բողոքների համար կառավարիչն ազատվում է պետական տուրքի վճարումներից:

Տվյալ դեպքում, կառավարիչ Ա. Զիտյանը, իր նշված օրենքով սահմանված լիազորություններից ելնելով, հայցադիմում է ներկայացրել դատարան, ուստի նման պարագայում, դատարանը գտնում է, որ վերջինից պետական տուրք բռնագանձման ենթակա չէ՝ օրենքով սահմանված կարգով դրա վճարումից ազատված լինելու հիմքով, սակայն քանի որ պատասխանողն օրենքով սահմանված կարգով ազատված չէ պետական տուրքի վճարումից և հայցադիմումը ենթակա է բավարարման, իսկ գործով պետական տուրքը ենթակա է վճարման, ուստի դատարանը գտավ, որ պատասխանողներից հոգուտ պետական բյուջե պետք է բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես սույն գործով պետական տուրքի գումար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48 հոդվածը սահմանում է, որ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը և նույն հոդվածի 2-րդ կետի գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա:

Տվյալ դեպքում, հայցվորը դատաքննության ընթացքում ապացուցել է իր կողմից վկայակոչած փաստերը, իսկ պատասխանողը, դատարան ներկայացնելով գրավոր պատասխան, դատաքննությանը դատարանին չի հիմնավորել պատասխանում իր կողմից վկայակոչած փաստերը, չի ներկայացրել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47 հոդվածով նախատեսված որևէ այլ ապացույց, որով կարող էր հաստատվել վերջինիս իրավական դիրքորոշման մեջ տեղ գտած փաստարկները:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132, հոդվածներով, 140 հոդվածի 1-ին կետով, 1401 հոդվածի 1-ին կետով դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

Հայցապահանջը բավարարել:

«Բջնի հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերության սնանկության գործով կառավարիչ Արսեն Զիտյանի ընդդեմ «Բջնի Գրուպ» ՍՊ ընկերության՝ «Բջնի Գրուպ» ՍՊ ընկերության և «Բջնի հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերության միջև 01.10.2008թ. կնքված ապրանքային նշանների գիջման մասին պայմանագիրն անվավեր ճանաչելու և «Բջնի Գրուպ» ՍՊ ընկերության և «Բջնի հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերության միջև 01.10.2008թ. կնքված ապրանքային նշանների գիջման մասին պայմանագրի նկատմամբ առջինից գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին հայցը բավարարել:

«Բջնի հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերության և «Բջնի Գրուպ» ՍՊ ընկերության միջև 01.10.2008թ. կնքված ապրանքային

	<p>նշանների գիջման մասին պայմանագիրը ճանաչել շինծու, հետևաբար՝ առոչինչ: Կիրառել 01.10.2008թ. կնքված ապրանքային նշանների գիջման մասին պայմանագրի նկատմամբ առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ, այն է. «Բջնի Գրուպ» ՍՊ ընկերությանը պարտավորեցնել «Բջնի հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերությանը վերադարձնել 01.10.2008թ. ապրանքային նշանների գիջման մասին պայմանագրով ստացած 8543, 8544, 9740, 10979, 13127 համարների ներքո գրանցված ապրանքային նշանները: «Բջնի հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերությանը պարտավորեցնել «Բջնի Գրուպ» ՍՊ ընկերությանը ճանաչել պահանջատեր 750.000 (յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի չափով, պահանջը ընդգրկել պարտատերերի պահանջների ցուցակում /գրանցամատյանում/, այն գրանցել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «Ջ» հերթում, և կարգավորել սնանկության մասին իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրությանը համաբառասխան: «Բջնի հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերության սնանկության գործով կառավարիչ Արսեն Զիտչյանի և ներկայացուցիչ Անդրանիկ Մկրտչյանի ընդդեմ «Բջնի Գրուպ» ՍՊ ընկերության՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից համապատասխան գրանցումներ կատարելու պահանջի մասով գործի վարույթը կարճել՝ հայցվորի կողմից հայցի այդ մասից հրաժարվելու հիմքով: «Բջնի Գրուպ» ՍՊ ընկերությունից հոգուտ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես գործով պետական տուրքի գումար: Վճիռը կանովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով^ա պարտապանի հաշվին: Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ Քաղաքացիական Վերաքննիչ դատարան 1 /մեկ/ ամսյա ժամկետում:</p>
	<p>ՂԱՏԱՎՈՐ^ա Կ. ՊՈՂՈՍՅԱՆ</p>
Ղատական ակտի ամսաթիվը:	29-07-2009
Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:	31-08-2009
Էջերի քանակը:	124
Գործին կից նյութեր:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	31-08-2009
Էջերի քանակը:	124
Գործին կից նյութերը:	
Գործն ուղարկվել է:	31-08-2009
Ուր:	ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան
Գրության համարը:	Ե-318/09
Գործը ստացվել է:	24-11-2009
Ներկայացվել է դիմում միջնորդություն:	

Ամսաթիվ:	01-09-2009
Ամսաթիվ:	24-11-2009
Ամսաթիվ:	24-11-2009
Էջերի քանակը:	124, 74
Գործին կից նյութերը:	
Գործն ուղարկվել է:	
Ուր:	
Գրության համարը:	
Գործը ստացվել է:	
Ներկայացվել է դիմում միջնորդություն:	
Ղատական Գործ N: ԿԴ2/0200/02/09	
Ամսաթիվ:	26-08-2009
Բողոք բերող անձը	
Անուն:	«Բջնի Գրուպ»
Հասցե:	
Ում կողմից է բերվել բողոքը:	Պատասխանող
Պետական տուրք:	10200
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Պատասխան բերող անձը	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Բողոքարկվող դատական ակտը:	29.07.09 Բավարարվել է
Գործի համարը:	ԿԴ2/0200/02/09
Ամսաթիվ:	03-09-2009
Վիճակագրական տողի համարը:	2.1.2
Գործի համարը:	ԿԴ2/0200/02/09
Գործը բաղկացած է (հատոր / էջերի քանակ):	124
Գործը ստացվել է:	Կոտայքի մարզ
Ամսաթիվ:	04-09-2009
Նախագահող դատավոր	

Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաք.
Դատավորի անուն:	Գոհար Մատինյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաք.
Դատավորի անուն:	Արմեն Էդուարդի Թումանյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաք.
Դատավորի անուն:	Լևոն Գրիգորյան
Երբ:	07-09-2009
Որոշումը ուղարկվել է կողմերին:	07-09-2009
Ուղարկվել է հուշաթերթիկ/որոշումը:	07-09-2009
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	17-09-2009
Ծանուցագիրը ուղարկվել է:	07-09-2009
Ժամ:	10.30
Նիստերի դահլիճի համարը:	103
Ամսաթիվ:	22-09-2009
Ծանուցագիրը ուղարկվել է:	
Ժամ:	16:00
Նիստերի դահլիճի համարը:	103
Ամսաթիվ:	22-09-2009
Անվտուրի թողնված դատական ակտ:	Պատճառաբանվել է
Այլ նշումներ:	
Դատական ակտ:	<p>Ծ՚Ա՞՞Ի՞ՄԵ Ծ՚Ա՞՞Յ՞ՆԻ՞ՆԻ ԴԱՏԱՐԱՆ</p> <p>Քաղաքացիական գործ թիվ ԿԴ2/0200/02/09</p> <p>Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ</p> <p>ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը հետևյալ կազմով՝ Նախագահող դատավոր՝ Գ. Մատինյան Դատավորներ՝ Լ. Գրիգորյան Ա.Թումանյան</p> <p>2009 թվականի սեպտեմբերի 22-ին</p> <p>Դռնբաց դատական նիստում, քննելով քաղաքացիական գործով ըստ հայցի՝ <<Բջնի հանքային ջրերի գործարան>> փակ բաժնետիրական ընկերության սնանկության գործով կառավարիչ</p>

Արսեն Զիտյանի ընդդեմ <<Բջնի Գրուպ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ առաջին գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին, ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի /դատավոր՝ Կ. Պողոսյան/ 2009 թվականի հուլիսի 29-ի թիվ ԿԴ2/0200/02/09 վճռի դեմ պատասխանող <<Բջնի Գրուպ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ Արամ Խաչատրյանի կողմից բերված վերաքննիչ բողոքը

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը .
Հայցվոր ՝ <<Բջնի հանքային ջրերի գործարան>> փակ բաժնետիրական ընկերության սնանկության գործով կառավարիչ Արսեն Զիտյանը 19.06.2009թվականին դիմելով ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան պահանջել է .
1. <<Բջնի Գրուպ>> ՍՊ ընկերության և <<Բջնի հանքային ջրերի գործարան>> ՓԲ ընկերության միջև 01.10.2008թվականին կնքված ապրանքային նշանների գիջման մասին պայմանագրի նկատմամբ կիրառել առաջին գործարքի անվավերության հետևանքներ, այն է՝ նշված պայմանագրի նկատմամբ կիրառել նվիրատվության պայմանագրին վերաբերող կանոնները:
2. Անվավեր ճանաչել <<Բջնի Գրուպ>> ՍՊ ընկերության և <<Բջնի հանքային ջրերի գործարան>> ՓԲ ընկերության միջև 01.10.2008թվականին կնքված ապրանքային նշանների գիջման մասին պայմանագիրը՝ որպես օրենքի պահանջներին չհամապատասխանող գործարք:
3. Կիրառել անվավերության հետևանքներ՝ <<Բջնի հանքային ջրերի գործարան>> ՓԲ ընկերության և <<Բջնի Գրուպ>> ՍՊ ընկերության միջև 01.10.2008թվականին կնքված ապրանքային նշանների գիջման մասին պայմանագրով վերջինիս փոխանցված և 8543, 8544, 9740, 10979, 13127 համարների ներքո գրանցված ապրանքային նշանները սեփականության իրավունքով հետ փոխանցել <<Բջնի հանքային ջրերի գործարան>> ՓԲ ընկերությանը՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության կողմից կատարելով համապատասխան գրանցումներ,
<<Բջնի հանքային ջրերի գործարան>> ՓԲ ընկերության և <<Բջնի Գրուպ>> ՍՊ ընկերության միջև 01.10.2008թվականին կնքված ապրանքային նշանների գիջման մասին պայմանագրով <<Բջնի հանքային ջրերի գործարան>> ՓԲ ընկերության կողմից ստացված 750000 ՀՀ դրամը վերադարձնել <<Բջնի Գրուպ>> ՍՊ ընկերությանը:
Գործի դատաքննության նախապատրաստական փուլում հայցվորի ներկայացուցիչը հրաժարվել է հայցադիմումում նշված 3-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներից:
ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 29.07.2009թվականի թիվ ԿԴ2/0200/02/09 վճռով հայցը բավարարվել է, վճռվել է. <<< Բջնի հանքային ջրերի գործարան>> ՓԲ ընկերության և <<Բջնի Գրուպ>> ՍՊ ընկերության միջև 01.10.2008թվականին կնքված ապրանքային նշանների գիջման մասին պայմանագիրը ճանաչել շինծու, հետևաբար՝ առաջին գիջման մասին պայմանագրի նկատմամբ առաջին գործարքի անվավերության հետևանքներ, այն է.
<<Բջնի Գրուպ>> ՍՊ ընկերությանը պարտավորեցնել <<Բջնի հանքային ջրերի գործարան>> ՓԲ ընկերությանը վերադարձնել 01.10.2008թվականի ապրանքային նշանների գիջման մասին պայմանագրով ստացած 8543, 8544, 9740, 10979, 13127 համարների ներքո գրանցված ապրանքային նշանները:
<<Բջնի հանքային ջրերի գործարան>> ՓԲ ընկերությանը

պարտավորեցնել «Բջնի Գրուպ» ՍՊ ընկերությանը ճանաչել պահանջատեր 750.000 (յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի չափով, պահանջը ընդգրկել պարտատերերի պահանջների ցուցակում /գրանցամատյանում/, այն գրանցել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «Զ» հերթում, և կարգավորել սնանկության մասին իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրությանը համապատասխան:

«Բջնի հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերության սնանկության գործով կառավարիչ Արսեն Զիտյանի և ներկայացուցիչ Անդրանիկ Մկրտչյանի ընդդեմ «Բջնի Գրուպ» ՍՊ ընկերության՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից համապատասխան գրանցումներ կատարելու պահանջի մասով գործի վարույթը կարճել՝ հայցվորի կողմից հայցի այդ մասից հրաժարվելու հիմքով:

«Բջնի Գրուպ» ՍՊ ընկերությունից հօգուտ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես գործով պետական տուրքի գումար»:

Սույն գործով վերաքննիչ բողոք է ներկայացրել պատասխանող «Բջնի Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ Արամ Խաչատրյանը:

Հայցվորը վերաքննիչ բողոքի պատասխան է ներկայացրել:

2. Վերաքննիչ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վերաքննիչ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոք բերած անձը գտնում է, որ վճիռը կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներով, որոնք ազդել են սույն գործի ելքի վրա:

Ա/ Նյութական իրավունքի նորմերի խախտման մասով.

1) Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված նորմը, 3-րդ, 437-րդ, 440-րդ հոդվածներով ամրագրված դրույթները:

Դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառումն անհիմն է, քանի որ բացակայել են նշված նորմի կիրառման համար հիմք հանդիսացող պայմանները:

Դատարանը հաշվի չի առել, որ պայմանագիրն իրականում կնքվել է այն ստորագրած անձանց միջև: Մասնավորապես, պատասխանողի անունից հանդես է եկել ընկերության տնօրեն՝ Սայաթ Հովհաննիսյանն, իսկ «Բջնի հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ի անունից՝ տնօրենների խորհրդի նախագահ Պետրոս Կիրակոսյանը:

Վերջիններս գործել են կանոնադրության հիման վրա: Պայմանագիրը ստորագրած անձանց կամքը պայմանագրում շարադրվածին համապատասխանելու հանգամանքը հավաստվում է նրանով, որ պատասխանողն ի կատարումն 01.10.2008թվականին կնքված պայմանագրից բխող իր՝ վճարման պարտականության համապատասխան վճարման հանձնարարագրով (հանձնարարագրերով) կատարել է պայմանագրի գնի վճարում: Իսկ «Բջնի հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերությունն, ի կատարումն պայմանագրով սահմանված իր պարտականության՝ հանձնել է պայմանագրի առարկան կազմող թիվ 8543, 8544, 9740, 10979, 13127 ապրանքային նշանները: Նշված հանգամանքը հավաստվում է նրանով, որ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Մտավոր սեփականության գործակալությունը համապատասխան գրանցման համարով պայմանագիրը գրանցել է :

Իրերի նման դասավորության պայմաններում խախտվել է նաև ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված նորմը, մասնավորապես, դատարանը հաշվի չի առել ՀՀ վճռաբեկ դատարանի 2008 թվականի փետրվարի 1-ի թիվ 3-89 (ՏԴ) որոշմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթի մեկնաբանությունները և նշված դատական ակտում առկա հիմնավորումները:

Դատարանն ընդունել է այն հանգամանքը, որ պայմանագիրը շինծու լինելու հիմքով առաջին չէ և դրա հիման վրա պայմանագրի կողմերը

ծեռք են բերել իրավունքներ: Նման եզրահանգման համար հիմք է հանդիսանում վճռի պատճառաբանական մասում արված հետևյալ հետևությունները. «Տվյալ դեպքում գործով առկա Օ1.10.2008թ. ապրանքային նշանների զիջման պայմանագրով «Բջնի հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ի և «Բջնի Գրուպ » ՍՊԸ-ի միջև կնքվել է երկկողմ պայմանագիր, որն ուղղված է եղել «Բջնի հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ի իրավունքները զիջվող նշանների նկատմամբ դադարեցնելու և միաժամանակ «Սիլ կոնցեռն» ՍՊԸ-ի կողմից նշված ապրանքային նշանների նկատմամբ իրավունքների սահմանմանը»:

Վճռի 8-րդ էջի, 1-ին պարբերությունում նշվել է՝ «Փաստորեն, կողմերը, օգտվելով իրենց քաղաքացիական իրավունքներից, պայմանագրի ազատության սկզբունքից ելնելով, կնքել են վերոհիշյալ պայմանագիրը և նման պայմաններում դատարանն անհրաժեշտ է համարում պարզել, թե իրականում արդյոք կողմերի նշված քաղաքացիական իրավունքները չեն հակասել օրենքին, որի ուժով և վերջիններիս պայմանագիր կնքելու ազատությունը և իրավունքը կարող են ստանալ որոշակի սահմանափակում:» Դատարանն ուղղակիորեն հաստատելով պայմանագրի հիման վրա իրավունքների ծագման փաստը, փորձել է պարզել, արդյոք այդ իրավունքները հակասել են օրենքին, թե՛ ոչ:

Այս պարագայում, պայմանագրի առոչինչ լինելու մասին խոսք լինելն արդեն իսկ առարկայազուրկ է:

Նման եզրահանգման համար իրավական հիմք է հանդիսանում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ և 304-րդ հոդվածների 1-ին մասերով սահմանված նորմերը:

Այս պայմաններում հարց է ծագում, թե ինչպես կարող էր դատարանը պայմանագրի նկատմամբ առոչինչ լինելու հիմքով կիրառել անվավերության հետևանքներ, երբ նույն դատարանը, նույն կետով փաստում է, որ պայմանագիրը հանդիսանում է պատասխանողի և «Բջնի հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ի փոխադարձ կամահայտնության արդյունք և դրա հիման վրա կողմերի համար ծագել են իրավունքներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված նորմի սխալ կիրառումն պայմանավորված է նաև նրանով, որ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ, 437-րդ, 440-րդ հոդվածներով ամրագրված դրույթները: Մասնավորապես, եթե դատարանը կիրառեր նշված նորմերի դրույթները, ապա վճռի պատճառաբանական մասում չէր հանգի սխալ եզրակացության առ այն, որ «առերևույթ ցածր» գնի միջոցով պարզվում է կողմերի իրական կամքը:

Բ/ Դատավարական իրավունքի նորմերի խախտման մասով.

1) Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված նորմը: Տվյալ պարագայում, դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ հայցվորը չի ներկայացրել թույլատրելի և վերաբերելի որևէ ապացույց առ այն, որ.

1. Պայմանագիրը ստորագրած անձանց կամքը չի համապատասխանում պայմանագրում շարադրվածին:

2. Պայմանագրով պատասխանողը և «Բջնի հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ը քողարկել են մեկ այլ գործարք:

2) Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերությամբ սահմանված նորմը:

Տվյալ պարագայում, դատարանը չի նշել վճռի պատճառաբանական մասում արված մի շարք հետևությունների համար հիմք հանդիսացած ապացույցները:

Վճռաբեկ դատարանն օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու իր սահմանադրական առաքելությունն իրականացնելու ժամանակ արձանագրել է, որ եթե վճիռը զուրկ է իրավական հիմնավորումից, ապա չի կարող լինել օրինական, համոզիչ, ինչպես նաև հեղինակավոր:

3) Ղատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նորմը:

Սույն գործով հայցադիմումի ներկայացման համար օրենքով սահմանված վճարման ենթակա պետական տուրքի գումարը չէր կարող բռնագանձվել պատասխանողից, քանի որ հայցվոր կողմը՝ որպես սնանկության գործով կառավարիչ դատարանի կողմից ազատվել է պետական տուրքի վճարումից:

Պետական տուրքի գծով արտոնության կիրառումը պետական տուրքի հարցի լուծում է: Ղատարանը չի կարող նույն գործով հայցվորի համար կիրառել պետական տուրքի վճարումից ազատելու արտոնություն, այնուհետև այդ պետական տուրքի գումարը բռնագանձել պատասխանողից: Այլ կերպ ասած՝ պետական տուրքի վճարումից ազատելու՝ որպես պետական տուրքի արտոնություն, կիրառելու դեպքում դատարանն այլևս չէր կարող անդրադառնալ նշված հարցին և այն բռնագանձել սույն գործով պատասխանողից՝ անկախ հայցի լրիվ կամ մասնակի բավարարման հանգամանքից:

4) ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իր գործի քննության ժամանակ որպես իրավական փաստարկ իրավունք ունի մատնանշելու նույնանման փաստական հանգամանքներով մեկ այլ գործով Հայաստանի Հանրապետության դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիմնավորումները:

ՀՀ Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի 01.02.2008թ. թիվ 3–35(ՎԴ) քաղաքացիական գործով բերված իրավական հիմնավորումները կիրառելի են նաև սույն գործի նկատմամբ: Տվյալ որոշմամբ մասնավորապես նշված է՝ «Սույն քաղաքացիական գործով վերաքննիչ դատարանը հաստատված է համարել վեճի առարկա նվիրատվության պայմանագրի շինծու լինելու հանգամանքը՝ վճռի հիմքում դնելով այն հանգամանքը, որ պայմանագիրը կնքվել է գույքահարկի և կոմունալ այլ վճարումների վճարման նպատակահարմարության պատրվակով:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հանգամանքը նվիրատվության պայմանագիրը շինծու ճանաչելու հիմք չէ, քանի որ տվյալ դեպքում խոսքը գնում է ոչ թե այլ գործարք քողարկելու մասին, այլ պարտավորությունների կատարման (գույքահարկի և կոմունալ այլ վճարումների վճարում) նպատակահարմարության մասին, ինչն իրականացվել է կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Բողոք բերած անձը խնդրել է ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 29.07.2009թվականի թիվ ԿԴ2/0200/02/09 վճիռը բեկանել և փոփոխել՝ ամբողջությամբ մերժելով՝ «<Բջնի հանքային ջրերի գործարան>> փակ բաժնետիրական ընկերության սնանկության գործով կառավարիչ Արսեն Չիտչյանի հայցը:

2. 1 Վերաքննիչ բողոքի պատասխանի հիմքերը, փաստարկները. Պայմանագրով Ընկերությունը ապրանքային նշանները գիջել է ընդամենը 750000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ) գումարով: Մինչդեռ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից կազմված մասնագիտական գնահատման հաշվետվությամբ հաստատված է, որ դրանց իրական շուկայական արժեքն իրականում հարյուրավոր անգամ ավել է: Անհասկանալի է, թե Ընկերությունը, լինելով առևտրային կազմակերպություն և հետապնդելով շահույթ ստանալու նպատակ, ինչպես է կնքել նման գործարք, որը ոչ մի կերպ չի տեղավորվում շահույթ ստանալու նպատակ հետապնդող գործարքի որակման շրջանակներում: Ապրանքային նշանները եղել են Ընկերության ամենախոշոր ակտիվներից՝ առանց որոնց Ընկերության հետագա առևտրային գործունեությունը թվում է անհեռանկար և աննպատակահարմար: Ընկերության կողմից նման գործարքի կնքումը կարող է ունենալ միայն մեկ բացատրություն, Ընկերությունը, տեղյակ լինելով իր՝ 4 067 201 600 ՀՀ դրամ

պարտավորության մասին և կանխատեսելով վերահաս սնանկությունը, Պայմանագրով փորձել է «ծերբազատվել» իր խոշոր ակտիվներից՝ ապրանքային նշանները փոխանցելով մեկ այլ ընկերության՝ «Բջնի Գրուպ» ՍՊԸ-ին: Սակայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 598-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված առևտրային կազմակերպությունների միջև հարաբերություններում նվիրատվության արգելքը շրջանցելու համար ընկերությունը և պատասխանողը կնքել են ոչ թե նվիրատվության պայմանագիր, այլ ապրանքային նշանների հատուցմամբ զիջման մասին պայմանագիր՝ դրանով իսկ քողարկելով իրենց միջև կնքված նվիրատվության պայմանագիրը: Այսինքն, ապրանքային նշանների զիջման մասին պայմանագիրը ստորագրած անձանց կամքը չի համապատասխանել Պայմանագրում շարադրվածին և նպատակ է հետապնդել քողարկելու ապրանքային նշանների անհատույց փոխանցման պայմանագրի առկայությունը: Փաստորեն, առկա է շինծու գործարք, քանի որ կողմերի միջև իրականում ծագել են այլ իրավահարաբերություններ, այն է՝ մեծ արժողությամբ ապրանքային նշանների անհատույց փոխանցման իրավահարաբերություն, որն իր բնույթով և իրավական հետևանքներով այլ է, քան այն իրավահարաբերությունը, այսինքն՝ մեծ արժողության ապրանքային նշանների աննշանակալից գնով վաճառքը, որոնք կողմերը ցանկացել են ներկայացնել երրորդ անձանց:

ՀՀ Վճռաբեկ դատարանն իր որոշումներում, մեկնաբանելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածը, նշել է, որ գրավոր գործարքների նկատմամբ շինծու լինելու հիմքով առաջինհ գործարքի անվավերության հետևանքների կիրառման համար անհրաժեշտ է ապացուցել, որ՝

1. գործարքն իրականում կնքվել է ոչ այն ստորագրած անձանց միջև, կամ
2. այն ստորագրած անձանց կամքը չի համապատասխանում պայմանագրում շարադրվածին: Այսինքն, շինծու գործարքն առկա է այն դեպքում, երբ կողմերի միջև իրականում ծագում են իրավահարաբերություններ, սակայն դրանք իրենց բնույթով այլ են, քան այն իրավահարաբերությունները, որոնք կողմերը ցանկանում են ներկայացնել երրորդ անձանց:

ՀՀ Վճռաբեկ դատարանը 01.02.2008թվականի թիվ 3-89 (ՏԴ) գործով կայացված որոշմամբ անիրատեսական է համարել շահույթ ստանալու նպատակ հետապնդող ընկերության կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքն անհատույց օգտագործման տրամադրելը, և փաստել այդ պայմանագրով մեկ այլ պայմանագրի քողարկման հանգամանքը:

Պայմանագրի առաջնչության վերաբերյալ վերը բերված հիմնավորումները լիովին տեղավորվում են ՀՀ Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ իրավական դիրքորոշման շրջանակներում և ևս մեկ անգամ փաստում Պայմանագրի շինծու լինելու հանգամանքը:

Ելնելով վերոգրյալից՝ Պայմանագրի նկատմամբ պետք է կիրառվեն նվիրատվության պայմանագրին վերաբերող կանոններն, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 598-րդ հոդվածի 3-րդ մասն արգելում է առևտրային կազմակերպությունների միջև հարաբերություններում նվիրատվությունը: Դրանից հետևում է, որ իրականում Ընկերության և Պատասխանողի միջև կնքված նվիրատվության պայմանագիրը չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերոհիշյալ հոդվածի պահանջներին:

3. Վերաքննիչ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 06.05.2009թվականի թիվ ԿՂ1/0001/04/09 օրինական ուժի մեջ մտած վճռով ՀՀ ԱՆ ԴԱԿԿ ծառայության Կոտայքի մարզային բաժնի պետի տեղակալ Ա. Սարգսյանի դիմումն ընդդեմ ՀՀ Բջնի հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ի՝ պատասխանողին սնանկ ճանաչելու պահանջի մասին՝ բավարարվել է: Վճռվել է՝ ՀՀ Բջնի հանքային

ջրերի գործարան»» ՓԲ ընկերությանը ճանաչել սնանկ:
17.06.2009թվականի որոշմամբ Արսեն Չիտչյանը նշանակվել է
<<Բջնի հանքային ջրերի գործարան»» ՓԲ ընկերության
սնանկության գործով կառավարիչ:

01.10.2008թվականին <<Բջնի հանքային ջրերի գործարան»» ՓԲ
ընկերության (այսուհետ՝ ՓԲԸ) և <<Բջնի Գրուպ»» ՍՊ ընկերության
միջև կնքվել է երկկողմ պայմանագիր, ապրանքային նշանների
գիջման մասին (այսուհետ՝ Պայմանագիր), համաձայն որի՝ <<Բջնի
հանքային ջրերի գործարան»» ՓԲ ընկերությունը 750.000 ՀՀ
դրամով /ներառյալ ԱԱՀ/ պատասխանող <<Բջնի Գրուպ»» ՍՊ
ընկերությանն (այսուհետ՝ ՍՊԸ) է գիջել 8543, 8544, 9740, 10979,
13127 համարների ներքո գրանցված ապրանքային նշանները:
4. Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և
եզրահանգումը.

Քննելով վերաքննիչ բողոքը նշված հիմքերի և հիմնավորումների
սահմաններում՝ վերաքննիչ դատարանը հանգեց հետևյալին.
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ մասի
համաձայն՝ շինծու գործարքն, այսինքն՝ մեկ այլ գործարքի
քողարկման նպատակով կնքված գործարքն, առաջինն է: Այդ
գործարքի նկատմամբ, հաշվի առնելով դրա էությունը, կիրառվում
են այն գործարքին վերաբերող կանոնները, որը կողմերն իրականում
նկատի են ունեցել շինծու գործարքը կնքելիս:

ՀՀ Վճռաբեկ դատարանն, իր որոշումներում անդրադառնալով սույն
հոդվածի միանման կիրառությանը, արտահայտել է հետևյալ
դիրքորոշումը.

Գրավոր գործարքների նկատմամբ շինծու լինելու հիմքով առաջինն
գործարքի անվավերության հետևանքների կիրառման համար
անհրաժեշտ է ապացուցել, որ՝

1. գործարքն իրականում կնքվել է ոչ այն ստորագրած անձանց
միջև, կամ

2. այն ստորագրած անձանց կամքը չի համապատասխանում
պայմանագրում շարադրվածին: Այսինքն, շինծու գործարքն առկա է
այն դեպքում, երբ կողմերի միջև իրականում ծագում են
իրավահարաբերություններ, սակայն դրանք իրենց բնույթով այլ են,
քան այն իրավահարաբերությունները, որոնք կողմերը ցանկանում
են ներկայացնել երրորդ անձանց:

Սույն գործի առանձնահատկությունների հաշվառմամբ Վերաքննիչ
դատարանը գտնում է, որ անհարժեշտ է պատասխանել այն
հարցին, թե արդյոք ՓԲԸ-ի և ՍՊԸ-ի միջև կնքված ապրանքային
նշանի գիջման պայմանագիրը նպատակ է հետապնդել քողարկել
մեկ այլ պայմանագիր:

Պայմանագրի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այն կնքվել
է ՓԲԸ-ի և ՍՊԸ-ի միջև: Նման եզրահանգման Վերաքննիչ
դատարանը հանգում է այն պատճառաբանությամբ, որ
Պայմանագիրը ստորագրված և կնքված է ընկերությունների կողմից:
Միաժամանակ սույն գործով կողմերը չեն վիճարկում Պայմանագիրը
ընկերությունների միջև կնքված լինելու հանգամանքը:

Վերոնշյալից հետևում է, որ բացակայում է Պայմանագրի շինծու
լինելը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ գործարքն
իրականում կնքվել է ոչ այն ստորագրած անձանց միջև:

Հետևաբար, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է
անդրադառնալ նաև Պայմանագիրը շինծու լինելու այն հիմքին, ըստ
որի՝ Պայմանագիրը տորագրած անձանց կամքը չի

համապատասխանում պայմանագրում շարադրվածին:

Անդրադառնալով վերաքննիչ բողոքի այն փաստարկին, որ
պայմանագիրը ստորագրած անձանց կամքի Պայմանագրում
շարադրվածին համապատասխանելու հանգամանքը հավաստվում
է Պայմանագրից բխող պարտավորությունների կատարմամբ՝

վերաքննիչ դատարանը գտնում է, որ նշված փաստարկն անհիմն է,
քանի որ Պայմանագրի ստորագրմամբ, դրանից բխող
պարտավորությունների կատարմամբ հաստատվում է կողմերի
կամահայտնությունը: Մինչդեռ՝ պայմանագիրը շինծու ճանաչելու

համար անհրաժեշտ է պարզել կողմերի իրական կամքը, որը կարող է չհամապատասխանել կամահայտնությանը և առաջացնել պայմանագրի անվավերության հետևանքներ՝ որոշակի հանգամանքների առկայության դեպքում:

Սույն գործով հաստատված են այն հանգամանքները, որ ՓԲԸ-ն 06.05.2009 թվականին ճանաչվել է սնանկ՝ 4 067 201 600 ՀՀ դրամ հարկային պարտավորություն ունենալու հիմքով, ինչը հաստատվում է նաև 16.01.2008 թվականի թիվ 1031148 ստուգման ակտով:

ՓԲԸ-ի և ՍՊԸ-ի միջև Պայմանագիրը կնքվել է 01.10.2008 թվականին, այսինքն՝ հարկային պարտավորության հայտնաբերման և սնանկ ճանաչելու վճռի կայացման միջև ընկած ժամանակահատվածում:

Սույն գործով հաստատված է նաև այն հանգամանքը, որ թվով հինգ ապրանքային նշանների զիջման գին է սահմանվել 750000 ՀՀ դրամը: Մինչդեռ՝ նշված ապրանքային նշանները, «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված եզրակացության համաձայն՝ հանդիսացել են ՓԲԸ-ի ամենաթանկ ակտիվները՝ 2748277180 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

Նշված փաստերը գնահատելով համակցության մեջ, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Պայմանագիրը կնքելով ՓԲԸ-ն ողջամտորեն չէր կարող հետապնդել շահույթ ստանալու նպատակ՝ ապրանքային նշանները զիջելով այլ ընկերության դրա իրական արժեքից շուրջ 2747500000 ՀՀ դրամ ցածր գնով: Վերաքննիչ դատարանը գտնում է նաև, որ Պայմանագրի կնքումը հետապնդել է հարկային պարտավորությունների հատուցման համար նշված ոչ նյութական ակտիվները իրացնելուց խուսափելու նպատակ:

Այսպիսով՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Պայմանագիրը կնքած ՓԲԸ-ի և ՍՊԸ-ի կամքը չի համապատասխանել նրանց կամահայտնությանը, այն է՝ կողմերը կնքել են ապրանքային նշանի զիջման պայմանագիր՝ դրանով քողարկելով մեկ այլ անհատույց երկկողմանի գործարք՝ նվիրատվության պայմանագիր:

Վերոնշյալ պատճառաբանությամբ Վերաքննիչ դատարանը անհիմն է համարում վերաքննիչ բողոքի փաստարկները ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ, 437-րդ, 440-րդ հոդվածների և 306-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթների խախտման մասին և գտնում է, որ առաջին ատյանի դատարանի կողմից նշված նորմերի խախտում թույլ չի տրվել:

Վերաքննիչ դատարանը անհիմն է համարում նաև վերաքննիչ բողոքի այն փաստարկը, որ դատարանը հաշվի չի առել ՀՀ Վճռաբեկ դատարանի 2008 թվականի փետրվարի 1-ի թիվ 3-89(ՏԴ) որոշմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթի մեկնաբանությունները և նշված դատական ակտում առկա հիմնավորումները, քանի որ առաջին ատյանի դատարանի վճռում ոչ միայն հղում է կատարված նշված որոշմանը (վճռի 8-րդ էջ), այլև դատարանի եզրահանգումները շարադրված են այդ որոշմամբ արտահայտված դիրքորոշմանը համապատասխան:

Անդրադառնալով վերաքննիչ բողոքի մյուս փաստարկին՝

Վերաքննիչ դատարանը եկավ հետևյալ եզրահանգման.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի վճարման գծով այլ արտոնությունները սահմանվում են օրենքով: Նշված դրույթն իր արտացոլումն է գտել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասում, համաձայն որի՝ իր լիազորությունների շրջանակներում դատարաններ ներկայացվող հայցադիմումների, դիմումների,

վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար կառավարիչն ազատվում է պետական տուրքի վճարումներից:
 Նշված հոդվածները մեկնաբանելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ սնանկության գործերով պետական տուրքի գծով արտոնություն սահմանված է սնանկության գործով կառավարչի համար: Մինչդեռ՝ պատասխանողը շարունակում է կրել պետական տուրքի վճարման ռիսկը և պարտավոր է վճարել պետական տուրք այն դեպքում, երբ հայցվորի (սնանկության գործով կառավարչի) հայցը բավարարվում է: Վերոնշյալ պատճառաբանությամբ վերաքննիչ դատարանը անհիմն է համարում վերաքննիչ բողոքի փաստարկն առ այն, որ առաջին ատյանի դատարանը հայցվորի նկատմամբ պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու դեպքում պետական տուրքը չի կարող բռնագանձել պատասխանողից:
 Այսպիսով՝ վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ բողոքը անհիմն է, այն ենթակա չէ բավարարման և առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող՝ օրինական և հիմնավորված դատական ակտ: Միաժամանակ, նկատի ունենալով, որ այն թերի է պատճառաբանված, վերաքննիչ դատարանն, օգտվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված իր լիազորությունից, վերոշարադրյալով լրացնում է վճռի պատճառաբանական մասը:
 Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ, 221-րդ հոդվածներով՝ վերաքննիչ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

<<Բջնի Գրուպ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ Արամ Խաչատրյանի վերաքննիչ բողոքը մերժել:
 ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի հուլիսի 29-ի թիվ ԿԴ2/0200/02/09 վճիռը թողնել օրինական ուժի մեջ:
 Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
 Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո:

Նախագահող դատավոր դատավոր դատավոր
 Գ.Մատինյան Լ.Գրիգորյան Ա.Թումանյան

Ծանոթություն՝ Սույն որոշումը մտել է օրինական ուժի մեջ:

Նախագահող դատավոր Գ.Մատինյան

Դատական ակտի ամսաթիվը:	22-09-2009
Ամսաթիվ:	28-09-2009
Ամսաթիվ:	28-09-2009

Էջերի քանակ:	2հ,1՝124թ,254թ
Գործին կից նյութերը:	
Գործն ուղարկվել է:	26-10-2009
Ուր:	Վճռաբեկ
Գրության համարը:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	26-10-2009
Դատական Գործ N: ԿԴ2/0200/02/09	
Ամսաթիվ:	22-10-2009
Բողոք բերող անձը	
Անուն:	Բջնի Գրուպ ՍՊԸ Արամ Խաչատրյան
Հասցե:	ք.Չարենցավան, Գործարանային 8
Այլ:	Բջնի հանքային ջրերի գործարան ՓԲԸ սնանկության գործով կառավարիչ Արսեն Չիտչյան -Երևան, Թոթովենցի 8/2 շ., բն. 21
Հավատարմագրված փաստաթան	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Պետական տուրք:	20000
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Պատասխան բերող անձը	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Բողոքարկվող դատական ակտը:	առջինն գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին
Գործի համարը:	ԿԴ2/0200/02/09
Ուն կողմից է բերվել բողոքը:	Պատասխանող
Գործի ստացման ամսաթիվը:	26-10-2009
Էջերի քանակը:	1՝124թ,
Գործին կից փաստաթղթերը:	2հատոր - 54թ
Վճռաբեկ վարույթի համարը:	ԿԴ2/0200/02/09
Ամսաթիվ:	26-10-2009
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Վճռաբեկ
Դատավորի անուն:	Մամիկոն Լիբկնեխտի Դրմեյան

Դատավոր	
Դատարանի անվանում:	Վճռաբեկ
Դատավորի անուն:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	28-10-2009
Որոշման բովանդակությունը:	Վերադարձնել թիվ ԿԴ2/0200/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.09.2009 թվականի որոշման դեմ Բջնի Գրուպ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցչի բերած վճռաբեկ բողոքը:
Ամսաթիվ:	30-10-2009
Գործի առաքման ամսաթիվը:	03-11-2009
Դատարան:	Կոտայքի մարզ
Այլ նշումներ:	1-124թ. 2-74թ.
Դատական Գործ N: ԿԴ2/0200/02/09	
Ամսաթիվ:	19-11-2009
Ամսաթիվ:	20-11-2009
Ուր:	Չարեւնցավան
Այլ նշումներ:	